եւ լսիեաց զբաղումն 'ի Հրէից · և 'ի խուճապիլ 'ի փախուստ իբրեւ դիմեցին խուժանօք անկանիլ յեկեղեցի Քրիստոնէից, զոր բաց տեսանէին, անդէն ինքնին փակեցան դրունքն · բուռն առնէին և հակառակէին ընդ պաշտօնեայս եկեղեցւոյն բանալ զմուտս · ահա եւ ընդ առաջ նոցա նոր հուր 'ի ճակատէ եկեղեցւոյն, զոմանս բոցակիզեաց և զայլս խանձողեալս և կիսայրեացս դարձոյց 'ի փախուստ։ Դարձեալ և յայլում վայրի երեւեցաւ հրձգութիւն անգիտելի · զի յորժամ աղգականք արանցն կորուսելոց ընդ փլատակաւ եկին 'ի խնդիր դիականց նոցա, տեսին յանկարծակի հուր ցոլացեալ սաստիկ 'ի յարկաց անտի, յորս եդեալ կային երկաթի գործիք շինուածոյն, և 'ի փախչիլն՝ բուռն ձգմամբ յածէր բոցն զկնի նոցա ընդ փողոցս և ընդ հրապարակս, իբրեւ 'ի խնդիր ճարակելոյ զոք և գտանիցէ 'ի Հրէից անտի։

Եւ 'ի միւսում դիշերի երեւեցաւ լոյս մեծ յերկինս խաչանիշ շրջանակաւ իբրեւ զնկարէն նշան աստեղազարդ և ճաճանչագեղ, ոչինչ ընդ հատ 'ի պայծառութենէ խաչին երեւելոյ ամօք յառաջ առ Կոստանդ կայսերաւ, եւ այս եւս տարածեալ 'ի Գողգոթայէ մինչեւ 'ի լեառն Ձիթենեաց։ Իբրեւ յարեան Հրէայք 'ի տեսանել զերեւոյթ ահաւոր Խաչին, դրոշմեցան 'ի զգեստս բաղմաց 'ի նոցանէ խաչք բաղմաթիւք թխատեսակ իբրեւ զտեղիս խանձողեալս 'ի հրոյ։ Փութացին Հրէայք թոթափել զայն նշանս Խաչին 'ի հանդերձից իւրեանց չփելով և լուանալով, այլ 'ի զուր, զի Աստուածադրոշմ էր կնիքն 'ի յանդիմանութիւն նոցա։ Նոյն նշան սրբոյ Խաչին երեւեցաւ 'ի վերայ հաւատացելոց և 'ի վերայ համօրէն սպասուց եկեղեցւոյ, ոչ միայն յԵրուսաղէմ, այլ և 'ի մերձակայ սահմանս մինչեւ յԱնտիոք։

Իբրեւ եկն Յուլիանոս յԵրուսաղէմ, պատմեցին նմա Հրէայք զամենայն մի ըստ միոջէ, և 'ի բաց կացին 'ի խորհրդոյ շինութեան Տաճարին՝ ըստ Սոկրատայ։ Ապա ձեռն արկ չարչարել զՔրիստոնեայսն · լուեալ իսկ էր զհամբաւ Կիւրղի եպիսկոպոսի դարձելոյ 'ի հրէութենէ, և թէ նա է որ եգիտ զՍ. Խաչն 'ի Գողգոթա առ Հելինեաւ, ոմսացաւ ընդդէմ Կիւրղի ըստ ատելութեանն զոր ունէր առ կեն-